ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2022 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 18.10.2022թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 19.10.2022թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Հարգելի պատվիրատու, Ձեր կողմից նշված նախահաշվային գները չեն համապատասխանում գնվող ապրանքի տեխնիկական բնութագրերին, ենթադրում եմ որ նման ցածր նախահաշվային գներով նախապատվությունը տալիս եք ինչոր կոնկրետ արտադրողի:»

Պարզաբանում

«Հայտնում ենք, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա և 1-7-րդ չափաբաժինների մասով, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի «ա.» պարբերության, գնման հայտով ներկայացվել են ընթացակարգը կազմակերպելու տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված մեկ միավոր գները, որոնց հիման վրա հրավերով սահմանվել են ձեռք բերվող ապրանքների գնման գները:

Միաժամանակ հայտնում ենք, որ պարզ չէ Ձեր կողմից ներկայացված դիտարկումը, որ ցածր գներով նախապատվությունը տրվում է կոնկրետ արտադրողի, քանի որ Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: